

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(Մննդյան 80-ամյակի առթիվ)

Հայ բանագիտությունն ունեցել է մեծ երախտավորներ՝ Մ. Էմին, Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Գ. Մրվանձտյանց, Ն. Մառ, Կոմիտաս, Մ. Աբեղյան, Հ. Օրբելի, Կ. Մելիք-Օհանջանյան, Ա. Ղանալանյան և ուրիշներ: Թվարկված անունների կողքին իր վաստակով կանգնում է մեր ժամանակակիցը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, արդի հայ բանագիտության առաջատար Սարգիս Հարությունյանը:



Բանագիտությունը հումանիտար գիտաճյուղերի մեջ ունի յուրահատուկ դժվարություններ. մեր օրերին հասած նրա նյութերի զգալի մասը գալիս են նախապատմական, նախա-գրային ժամանակներից, սակայն իրենցում ամփոփում են մարդու հնագույն մտածողության ձեռքբերումները, մարդկության և աշխարհի վերաբերյալ վաղնջական պատկերացումները, երբեմնի կրոնական

ընկալումները, մարդկային վերժամանակյա իմաստությունը: Այս բարդ երևույթները ճշգրիտ հասկանալու և մեկնաբանելու համար անհրաժեշտ է գիտահետազոտական ահռելի պատրաստվածություն, գիտելիքների հսկայական պաշար, աստվածային ձիրք և անմնացորդ նվիրում: Այս հատկանիշներն ունեցել են հայ բանագիտության մեծ երախտավորները, դրանք ունի և Սարգիս Հարությունյանը, որը նաև իր արտաքին նկարագրով, բնավորության անմիջական որոշ գծերով, կարծես, սերում է հին դարերից, սակայն հնությունը բերում է իր ժամանակակիցներին թարմացնելու, նորացնելու մեծ ցանկությամբ:

Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանը ծնվել է Հայաստանի այժմյան Առոցքի շրջանի Ղազանչի գյուղում 1928-ի սեպտեմբերի 22-ին: Մինչև 5-րդ դասարանը սովորել է հայրենի գյուղում, այնուհետև ընտանիքի հետ տեղափոխվել Թբիլիսի, որտեղ և ավարտել է միջնակարգ կրթությունը:

1947-ին ընդունվել է Երևանի պետական համալսարանի արևելյան լեզուների և գրականության բաժինը: Գերազանց առաջադիմության համար արժանացել է Ստ. Մալխասյանցի և Ավ. Իսահակյանի անվան կրթաթոշակների: 1952-ին ավարտել է համալսարանը և աշխատանքի անցել Հայպոլիգրաֆիատի վարչութ-

յունում՝ վարելով տարբեր պաշտոններ: 1956-ին նա արդեն Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտ էր՝ «Հայ ժողովրդական բանահյուսություն» մասնագիտությամբ: Նրա գիտական ղեկավարն է եղել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արամ Ղանալանյանը: Փաստորեն, ասպիրանտը դարձել է իր ղեկավարի գործի արժանավոր շարունակողը և հայ բանագիտության գանձարանը հարստացնողը¹:

Մ. Հարությունյանի առաջին մենագրությունը՝ «Հայ ժողովրդական հանելուկներ», աչքի է ընկնում տեսական խոր ընդհանրացումներով: Երիտասարդ գիտնականն ընտրել էր հայ բանագիտության տակավին չուսումնասիրված մի բնագավառ և մանրագին հետախուզել ու մեկնաբանել: Նրա քննությունը սպառնիչ խոսք է այդ բնագավառի վերաբերյալ: Հինգ տարի անց լույս է տեսնում հայ ժողովրդական հանելուկների համահավաք ժողովածուն, որը լրացնում է գեղարվեստական բանավոր ավանդության գանձարանը²: Մեզանում առաջինը հատուկ քննության նյութ դարձնելով հանելուկի բանահյուսական տեսակը՝ գիտնականը լիովին բացահայտում է այդ ժանրի ճանաչողական և գրականագիտական արժեքը: «Ժողովրդական հանելուկները իրականության գեղարվեստական անդրադարձման այլաբանական միջոցներ են»³, – գրում է նա: Երիտասարդ բանագետը մատնացույց է անում նաև այն հանելուկները, որոնցում հիշատակված են Մեծ Հայքի տնտեսական-քաղաքական կյանքում նշանակալից դեր կատարած գավառների, քաղաքների, գյուղերի անունները: Սա պատմական անգնահատելի տեղեկանք է մեր ժողովրդի պատմական անցյալին վերաբերող. այդ հանելուկներում Վանը, Բասենը, Բիթլիսը, Նախշվանը և այլ վայրեր Մեծ Հայքի անբակտելի մասերն են: Մ. Հարությունյանը հանելուկներում առանձնացնում է նաև հայ ժողովրդի կենցաղին վերաբերող ազգագրական փաստերը: Որպես իսկական բանագետ՝ նա գիտահետազոտական աշխատանքը մշտապես զուգակցել է գործնական բանահավաքության հետ, եղել է այդ բնագավառի գործի կազմակերպիչներից:

1960-ին Մ. Հարությունյանը գրականության ինստիտուտից տեղափոխվել է նորակազմ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ուր 1972-ին դարձել է բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնի վարիչ, իսկ 1992-ին նշանակվել այդ ինստիտուտի փոխտնօրեն: 1973 թվականից սկսած՝ նա գլխավորում է «Մասնա ծոեր» ժողովրդական վեպի նոր պատումներ հայտնաբերելու ու գրառելու խիստ կարևոր արշավախումբը, որի պրպտումների շնորհիվ հայտնաբերվեցին մեր ազգային էպոսի 81 նոր պատումներ և դրանցից շուրջ 24-ն արդեն հրատարակվել են: Բանագետի գիտական հետաքրքրությունների մեջ

¹ Մարգիս Հարությունյանի կենսամատենագիտությունը լույս է տեսել 2003-ին. տե՛ս Վաստակաշատ գիտնականներ, 4, Մարգիս Բարդուղիմեոսի Հարությունյան, կենսամատենագիտություն, ներածությունը և մատենագիտությունը Ալվարդ Ղազիյանի, Երևան, 2003:

² Տե՛ս Մ. Բ. Հ ա ր ո թ յ ու ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ (ուսումնասիրություն), Երևան, 1960:

³ Մ. Հ ա ր ո թ յ ու ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ (գիտական համահավաք ժողովածու, ներածություն, ծանոթագրություններ, մատենագիտություն, Երևան, 1965):

⁴ Մ. Հ ա ր ո թ յ ու ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ (ուսումնասիրություն), էջ 46:

«Մասնա ծոեր» էպոսը զբաղեցնում է շատ երևելի տեղ: 1977-ին լույս է տեսել «Մասնա ծոեր» ժողովրդական վեպի տասը ընտիր պատումները՝ Ս. Հարությունյանի աշխատությամբ: Ժողովածուի հեղինակը բացատրում է այդ հրատարակության բուն նպատակը. բացի համահավաք բնագրից, որն առավել մատչելի ձևով է ներկայացնում մեր ազգային վեպը, լայն ընթերցողին մատուցել ժողովրդական ասացողների խոսքի հմայքը ներկայացնող տասը լավագույն պատումները. «...մեր ժողովրդական վեպի բուն ավանդական կերպարանքը ներկայացնում են հայոց լեզվի տարբեր բարբառներով ստեղծված արդեն մեկուկես հարյուրից անցնող պատումները, որոնք իրենց բարբառային հյութեղ ու կենսաթթվառ արտահայտություններով յուրաքանչյուր ազգագրական շրջանի հայ հատվածի ու անհատ վիպասացի գեղարվեստական մտահայեցողությունների, հոգեբանության, պատկերավորման յուրահատուկ համակարգի կոնկրետ դրսևորումներն են և հայոց լեզվի ու վիպական բանահյուսության հարստության ու բազմապիսիության անկրկնելի վկայություններ»⁵:

1975-ին էլ լույս տեսել հայ բանագիտության մեջ գրեթե չուսումնասիրված անեծքների ու օրհնանքների ժանրային ու տիպաբանական ուսումնասիրությանը նվիրված աշխատությունը: Դրան կցված է անեծքների և օրհնանքների կառուցվածքային տիպերի աղյուսակը: Թարգմանելու դեպքում աշխատությունը կարող է ունենալ միջազգային հնչեղություն, որովհետև անեծքների և օրհնանքների ժանրը առկա է գրեթե բոլոր ժողովուրդների բանավոր ավանդության մեջ և ունի համամարդկային մեծ ընդհանրացումներ՝ հատկապես հնագույն ժամանակների մտածողությունը ներկայացնող: Ս. Էմինից, Ղ. Ալիշանից, Ս. Աբեղյանից հետո Ս. Հարությունյանը նորովի է քննել հին հայերի հավատալիքները և հեթանոսական դիցարանը⁶:

Բանագետի կազմած նոր բառարանով, ծանոթագրություններով և բոլորովին նոր բովանդակություն ունեցող առաջաբանով լույս է տեսել «Մասունցի Դավիթ» էպոսի բնագիրը: Այս հրատարակության առաջաբանը լրացնում է Հովսեփ Օրբելու հայտնի նախաբանը և երկուսն իրար հետ առավել ամբողջական պատկերացում են տալիս «Մասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի վերաբերյալ:

Պատահական չէ, որ երբ 1963-ին ֆրանսիացի նշանավոր հայագետ, «Մասունցի Դավիթ» էպոսի թարգմանիչ Ֆրեդերիկ Ֆեյդին այցելեց Հայաստան, Ս. Հարությունյանը հանդիպեց նրա հետ, հարցազրույց ունեցավ և դրա մասին տպագրեց թե՛ «Գրական թերթում» և թե՛ «Սովետական գրականություն» ամսագրում՝ երկուսն էլ միջնադարին հատուկ համեստությամբ անստորագիր:

Ս. Հարությունյանի հետաքրքրությունների շրջանակը լայն է: Նա իր բազմաթիվ հոդվածներով հարստացրել է «Պատմաբանասիրական հանդեսը», «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիրը, «Բազմավեպը», «Գրական թեր-

⁵ Մասնա ծոեր, ժողովրդական վեպ, աշխատությամբ Սարգիս Հարությունյանի, Երևան, 1977, էջ 6:

⁶ Ս. Հարությունյան. Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001:

թը», ռուսական և արտասահմանյան ամսագրերը՝ հատկապես Փարիզում հրատարակվող «Revue des études arméniennes» պարբերականը, որում հանդես է եկել բանագետ Ա. Սահակյանի հետ:

Գուցե Թիֆլիսի դպրոցական տարիներն են պատճառը, որ Ս. Հարությունյանը այդքան շատ է սիրում, ուղղակի պաշտում է Սայաթ-Նովային և անմիջականորեն արձագանքել է այդ մեծ բանաստեղծի ու երաժշտի ստեղծագործության նորովի գնահատողներին՝ գրախոսելով Ջարգանդ Դարյանի «Սայաթ-Նովա» վեպը և Պարույր Սևակի «Սայաթ-Նովա» մենագրությունը, որը վիպական շնչով լի բանասիրական աշխատություն է:

Եվ դա պատահական չէ, քանի որ Ս. Հարությունյանի համալսարանի դիպլոմային ավարտաճառն է «Պարսկերենի տարրերը Սայաթ-Նովայի հայերեն խաղերում»:

Սկսած գիտահետազոտական աշխատանքի առաջին քայլերից՝ Ս. Հարությունյանը հետևողական գրախոսել է անվանի բանագետներ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ա. Ղանալանյանի, Ա. Մնացականյանի, ինչպես նաև անդրադարձել անցյալի բանագետների վերաբերյալ հրապարակ իջած մենագրություններին: Պատահական չէ, որ Ս. Հարությունյանի գրչին են պատկանում «Հայկական Սովետական հանրագիտարանի» 12 հատորների բանահյուսությանը վերաբերող բոլոր հոդվածները, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի բանագիտական հոդվածները, ՀՀ ԳԱԱ հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի «Հայ գրականությունն ու ժողովրդական բանահյուսությունը V–VIII դդ.»⁷ հատվածը: Հայտնի է, որ հայագիտությունը հատկապես արտասահմանում առավել անկողմնակալ և արդյունավետ զարգացել է XIX դարի երկրորդ կեսից մինչև XX դարի 20-ական թվականները: Միայն այդ հարուստ ժամանակահատվածի հայագիտության նկարագիրը սեղմ ձևով տվել է «Հայ ժողովրդի պատմության» VI հատորում⁸:

Ս. Հարությունյանի գրչին են պատկանում նաև " Мифы народов мира" (Մ., 1980, 1982) հանրագիտարանի, ինչպես նաև "Мифологический словарь"- ում (Մ., 1990) գետեղված "Статьи по армянской мифологии" հոդվածները: Դրանց մի մասը թարգմանվել է գերմաներեն և հունգարերեն:

Ս. Հարությունյանի մեծագույն ծառայություններից մեկը այն մենագրությունն է, որը նվիրված է Մանուկ Աբեղյանին: Գիրքը լույս է տեսել 1970-ին և մեկ տարի անց պաշտպանվել է որպես դոկտորական ատենախոսություն: Այս հետազոտության մեջ առաջին անգամ արժեքավորված է հայ բանասիրության զարգացման հիմնարար և կարևորագույն ժամանակահատվածը⁹: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ մեզանում ոչ ոք Ս. Հարությունյանի չափ չի յուրացրել Ս. Աբեղյանի գիտական ժառանգությունը և գիտական դասեր քաղել նրանից:

Բանագետը մեծ սիրով միջազգայնացնում է հայ բանագիտության գանձերը՝ հանդես գալով միջազգային բազմաթիվ գիտաժողովներում՝ Հայաստանում և

⁷ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 439–474:

⁸ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 898–920:

⁹ Ս. Հ ա ր ո ս յ ո յ ան յ ա ն. Մանուկ Աբեղյան. կյանքը և գործը, Երևան, 1970, 670 էջ:

արտերկրում: Պատահական չէ, որ 1989-ին ընտրվել է Հելսինկիում գտնվող գրուցագիտության միջազգային ընկերության անդամ: Հավանաբար, հայոց ազգային արժեքների միջազգայնացման մղումն էլ նրան մտերմացրել է աշխարհահռչակ Վիլյամ Սարոյանի հետ, որի ջերմ ընկերակցությունը 8 օր վայելելուց հետո հանդես է եկել «Ութ օր Սարոյանի հետ» էսսեով¹⁰:

Ս. Հարությունյանը մտածել է նաև հայ դպրոցականներին ազգային բանահյուսության գանձերի հետ ծանոթացնելու կարևորագույն խնդրի մասին: Հատուկ խանդաղատանքով ու վարպետությամբ մշակել է հայ առասպելաբանության ու վիպասքի մեջ եղած նյութերը և դրանք հրատարակել «Հայ հին վիպաշխարհը» խորագրով: «Արևիկ» հրատարակչության հետ նրա համագործակցությունը չի ավարտվել միայն այս արժեքավոր գրքով. այն լույս է տեսել նաև բոլորովին վերջերս՝ ռուսերենով¹¹: Բանագետը մանուկներին նվեր է մատուցել իր «Ասողին լսող է պետք» առած-ասացվածքների, «Էն ի նչն է, ի նչը» հանելուկային ժողովածուներով¹²:

2000 թ. Բելյուրում լույս է տեսել բանագետի «Հայ առասպելաբանություն» մենագրությունը, որն իրենով նշանավորել է հայ առասպելաբանության մեկնաբանման նոր մակարդակ: Գրքում հայ ազգային վաղնջական ավանդությունները քննված են հնդեվրոպական ցեղակից ժողովուրդների հնագույն դիցարանի և վիպասանության պատմահամեմատական գուգադրմամբ, մատնացույց է արված համընդհանուրը, առանձնացված է բուն հայկականը: Այս մեծարժեք հետազոտությունը բաղկացած է տասը գլուխներից և մի քանի կարևոր ենթագլուխներից, որոնք քննում են հետևյալ պրոբլեմները՝

- ա) Աշխարհի տեսքի և կառուցվածքի առասպելները,
- բ) Աստեղային առասպելները,
- գ) Օղերնության առասպելները,
- դ) Ամպրոպային Աստծո կերպարի և վիշապամարտի առասպելի տարբեր դրսևորումները հայ վիպական ավանդության մեջ,
- ե) Վիշապամարտը «Մասնա ծոեր» հերոսավեպում,
- զ) Բուսաշխարհի առասպելները,
- է) Կենդանական աշխարհի առասպելները,
- ը) Երկվորյակների առասպելները,
- թ) Մեռնող-հառնողի առասպելները,
- ժ) Մահվան և հանդերձյալ կյանքի առասպելները,
- ժա) Կատարածաբանական առասպելները:

Ս. Հարությունյանը հայ հին վիպական ավանդությունը (ըստ տարբեր պատմիչների հաղորդածի), նաև «Մասնա ծոեր» էպոսը քննել է՝ էլնելով բանագի-

¹⁰ Տե՛ս «Սովետական գրականություն», 1970, թիվ 7, էջ 94–101, թիվ 8, էջ 81–92:

¹¹ С. А р у т ю н я н. Мифы и легенды Древней Армении. Ереван, 2007.

¹² Էն ի նչն է, ի նչը (հայկական ժողովրդական հանելուկներ), կազմեց Սարգիս Հարությունյանը, Երևան, 2008:

տության միջազգային փորձի նվաճումներից¹³: Ի դեպ, նրա խմբագրությամբ լույս է տեսել Հայկյան Արամի առասպելին վերաբերող նոր մեկնաբանում¹⁴:

Ս. Հարությունյանի երկարամյա ջանադիր աշխատանքի արդյունքն է «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» ուսումնասիրությունը¹⁵, որը կոթողային ներդրում է հայ բանագիտության հարուստ ավանդույթներ ունեցող հետազոտության բնագավառում. սրա և նախորդի՝ «Հայ առասպելաբանության» եվրոպական լեզուներով թարգմանելու դեպքում դրանք կնպաստեն հայագիտության նոր ժամանակահատվածի միջազգային հնչեղությանը:

Երկար տարիներ Ս. Հարությունյանը Հանրապետության տարբեր բուհերում դասախոսել է «Հայ ժողովրդական բանահյուսություն», «Հայ առասպելաբանություն» և «Հայ հին գրականություն» առարկաները: Տարիներ շարունակ եղել է գիտական տարբեր խորհուրդների անդամ, դեկավարել է թեկնածուական ատենախոսություններ, եղել դոկտորական ատենախոսությունների գիտական խորհրդատու, մեծ սիրով իր թանկ ժամանակը տրամադրել է ընդդիմախոսելու դոկտորական ու թեկնածուական բազմաթիվ ատենախոսություններ:

Ս. Հարությունյանը կենսասեր անձնավորություն է, շահագրգիռ իր ժողովրդի ու գիտության առաջընթացով: Ինչպես ժողովրդական հեքիաթն է մաղթում՝ նրան ցանկանանք երջանիկ ու երկար կյանք, գիտական նոր նվաճումներ և տիտղոսներ:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

¹³ Տե՛ս Ս. Հ ա թ ո թ յ ո ն յ ա ն. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000:

¹⁴ Տե՛ս Ա. Պ ե տ թ ո ս յ ա ն ն. Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգաձագման խնդիրը, Երևան, 1997:

¹⁵ Տե՛ս Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, աշխատությամբ Սարգիս Հարությունյանի, Երևան, 2006: